ՆԱԽՆԻՆԵՐԻ ԿԱՆՉԸ

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ
(1914–1993)

Ծնվել է Սիսիանի շրջանի Լոր գյուղում: Հ. Սահյանի բանաստեղծությունները տպագրվել են անցյալ դարի 30-ական թվականներից, սակայն նա համընդհանուր ճանաչման է արժանացել ռազմաճակատում գրած «Նաիրյան դալար բարդի» բանաստեղծությամբ, որը հատկանշվում է Հայաստան երկրի հանդեպ մեծ սիրով:

Առաջին գիրքը լույս է տեսել 1946թ.՝ «Որոտանի եզերքին» խորագրով: Այստեղ դրսևորվում էր Սահյանի բանաստեղծական ընդհանուր ուղղվածությունը՝ սեր հայրենի բնաշխարհի ու մարդու նկատմամբ: 1968թ. լույս է տեսել Հ. Սահյանի «Քարափների երգը» ժողովածուն, որը համարվել է նրա բանաստեղծական արվեստի գանգակատունը: Սահյանի «Սեզա՛մ, բացվի՛ր» ժողովածուն 1975թ. արժանացել է պետական մրցանակի: Հեղինակն իր «Իրիկնահաց», «Կանաչ, կարմիր աշուն», «Դաղձի ծաղիկ» ժողովածուներում պատկերում է մարդկային կյանքն ու ապրումները:

Հ. Սահյանի ստեղծագործության մեջ մեծ թիվ են կազմում անցյալին, մանկությանը նվիրված բանաստեղծությունները, որոնք ունեն արդիական իմաստավորում:

Նա թարգմանել է Ա. Պուշկինի, Ս. Եսենինի, Գ. Լորկայի և այլոց ստեղծագործությունները:

1998թ. հետմահու լույս է տեսել Հ. Սահյանի «Ինձ բացակա չդնեք» անտիպ բանաստեղծությունների ժողովածուն: